# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**15 օգոստոսի 2013 թվականի N 83-Ա**

**ք. Հրազդան**

## Ս. ՆՈՒՇԻԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի և 164-րդ հոդվածի 1-ին մասի՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Քանաքեռավանի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Սուսաննա Նուշիկյանին*** տրամադրել 2013 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից՝ տաս աշխատանքային օր՝ 2013 թվականի օգոստոսի 20-ից մինչև օգոստոսի 30-ը ներառյալ:

Հիմք՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N 628-Ա որոշման 1-ին կետով հաստատված ժամանակացույցը:

2. ***Սուսաննա Նուշիկյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Քանաքեռավանի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության ընտանեկան բուժքույր ***Հասմիկ Մանուկյանի***, իսկ բնակչության բժշկական սպասարկումը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ջովունու առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության ընտանեկան բժիշկ՝ ***Ռուզաննա Բաղդասարյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ